Համաձայն "Հողի հարկի մասին" ՀՀ օրենքի՝ ֆիզիկական անձանց մասով հողի հարկից ազատվում են՝
1) հողի այն սեփականատերերը, մշտական և ժամանակավոր օգտագործողները, որոնց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշակի ժամկետով եկամտահարկից ազատվելու պայմանով տրամադրվել են հողեր՝ այդ ժամկետի ընթացքում.

2) նոր հիմնված և երիտասարդ խաղողի ու պտղատու այգիները, մինչև տնկարկների լրիվ պտղաբերությունը (յուրաքանչյուր սորտի համար ագրոտեխնիկական ցուցումներով սահմանված ժամկետում)՝ դրանց տարածքը 0,1 հեկտար և ավելի լինելու դեպքում.

3) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասից կամովին հրաժարվելու դեպքում՝ համայնքային կամ պետական սեփականություն ճանաչված հողամասերի սեփականատեր հանդիսացած ֆիզիկական անձինք՝ այդ հողամասերի համար.

4) հողի հարկից 50 տոկոսի չափով ազատվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով եկամտահարկի վճարումից ազատված քաղաքացիները՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող հողերի համար:

5) ՀՀ կառավարության սահմանած կարգով համայնքի ավագանին կարող է սահմանել հողի հարկի գծով արտոնություններ:

6)ՀՀ սահմանամերձ բնակավայրերի՝ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքների համար, հողի հարկ վճարողներն ազատվում են 1994 թ. և հետագա տարիների համար հաշվարկված հողի հարկից և սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով հաշվարկված տույժերից (արտոնություն ստացող բնակավայրերի ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը, իսկ չօգտագործվող հողատարածքներինը՝ մարզպետը):

7) Սահամանամերձ համայնքների հողօգտագործողների հողի հարկը (մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքների համար) 2013 թ-ից ամբողջ գումարը վճարում է պետությունը:

Համաձայն "Գույքահարկի մասին" ՀՀ օրենքի՝ ֆիզիկական անձանց մասով գույքահարկից ազատվում են՝

1) ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված (մահացած), ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած և օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց (կամ ընտանիքի անդամներին) պատկանող գույքը՝ մինչև այդ անձանց զավակներից մեկի 18 տարին լրանալը.

2) սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ

ստացած հաշմանդամները՝ այդ ավտոմեքենաների մասով.

3) ազատ տնտեսական գոտու տարածքում գտնվող ազատ տնտեսական գոտու շահագործողներին պատկանող կամ նրանց կողմից օգտագործվող հասարակական և արտադրական նշանակության շենքերը և շինությունները.

4) ծառայության ընթացքում գույքահարկից ազատվում են ՀՀ միջազգային պայմանագրերով դաշնակից երկրների, ինչպես նաև ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք.

5) ՀՀ կառավարության սահմանած կարգով համայնքի ավագանին կարող է սահմանել գույքահարկի գծով արտոնություններ: